



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 11 ՓԵՏՐՈՒՄ, 2019

ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 90

ԱՍՏՈՒԱԾ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ Է, ՄԱՐԴԸ՝ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ

Տէր, ապաստան եղար մեզի սերունդէ սերունդ:
 Նախքան լեռներու ծնունդ առնելը,
 նախքան երկրին ու տիեզերքին գոյութեան գալը,
 դուն կաս ու կը մնաս, ով Աստուած:
 Մարդը հողին կը վերադարձնես, ըսելով. «Հողին դարձէ՛, ադամորդիներ»:
 Որովհետեւ քու աչքիդ՝ հազար տարին երէկուան պէս ակնթարթ մըն է,
 գիշերուան մէկ պահուն պէս, որ արդէն անցած է:
 Երազի պէս յանկարծակի վերջ կը դնես անոնց կեանքին.
 Խոտին պէս, որ օրը օրին կը բուսնի, առաւօտեան կը ծաղկի ու կը դալարի,
 իրիկունը կը խամրի ու կը չորնայ:
 Այդպէս կը սպառես մեզ բարկութեամբդ,
 գայրոյթովդ կը զարհուրեցնես մեզ:
 Երեւան կը հանես մեր յանցանքները,
 մեր գաղտնիքները լոյսին կը բերես:
 Սրտմտութեանդ հետեւանքով մեր օրերը կը փախչին,
 մեր կեանքը շուտ վերջ կը գտնէ, հառաչանքի մը նման:
 Եօթանասուն տարի է մեր կեանքի տեւողութիւնը,
 կամ է հազիւ ութսուն տարի.
 որ՝ լաւագոյն պարագային՝ չարչարանք է ու նեղութիւն:
 Կեանքը շուտով վերջ կը գտնէ, յաջորդ պահուն՝ արդէն չկանք:
 Ո՞վ կը նանչնայ բարկութեանդ զօրութիւնը,
 թէ իրապէս ինչ ահարկու է գայրոյթդ:
 Սորվեցուր մեզի՝ թէ մեր օրերը համբուած են,
 որպէսզի սրտով իմաստուն դառնանք:
 Վերադարձիր մեզի, Տէր, մինչեւ ե՞րբ պիտի լքես. գթա մեզի՝ ծառաներուդ
 Ամէն առտու մեզ քու սիրովդ ողողէ,
 որպէսզի մեր կեանքի բոլոր օրերուն, ցնծութեամբ երգենք եւ ուրախանանք:
 Ճնորհիք մեզմէ անպակաս ըրէ, Տէր, մեր Աստուածը.
 մեր գործերը դուն առաջնորդէ, մեր գործերը յաջողէ:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՒՐԱ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ

1:8-12

ՊԱՅՔԱՐԵՑԷՔ ՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՐՎԵՑՆՈՂՆԵՐՈՒՆ ԴԷՄ (1:8-12)

Յուդա իր այս ընդհանրական նամակին մէջ կը նկարագրէ այդ անհաւապ մարդիկը, որոնք սարդաձև հաւաքացեալներու շարքերուն մէջ, թէ ինչպիսի նկարագիր ունեցող անձնատրոյթիւններ են, այդ նկարագրային գիծերու ամբողջական շարքը Պետրոս Առաքեալ ինք եւս կը նշէ իր ընդհանրական երկրորդ նամակին մէջ:

1. Աստուծոյ շնորհքը պարմող Աւերարանը չարափոխող, իրենց անբարոյ ընթացքին պարշաճեցնող:
2. Կը մերժեն իբրեւ միակ եւ ամենիշխան Տէր ճանչնալ Յիսուս Քրիստոսը:
3. Երազարես այս մարդիկը իրենց մարմինները կը պղծեն:
4. Աստուծոյ փրկութիւնը կ'արհամարհեն:
5. Հոգեղէն փառաւոր էակները կ'անարգեն:
6. Ինքնահաւան ու յանդուգն են:
7. Անոնք իրենց չհասկցած բաները կ'անարգեն:
8. Անոնք կը նմանին անբան անասուններու, որոնք միայն իրենց կիրքերով ու ցանկութիւններով կ'առաջնորդուին, մինչ իրենց հոգին ու միտքը սպականած է:
9. Հաճոյք կ'առնեն իրենց գեղի ցանկութիւնները կարարելէ:
10. Հաւաքացեալներու հաւաքոյթի սեղանները կը պղծեն եւ կ'արաբարտեն իրենց խաբէբայութիւններով:
11. Իրենց աչքերը շնացող կիներ միայն կը փնտռեն եւ չեն յագենար մեղք գործելէ:
12. Տկար մարդիկ կը փնտռեն խափելու համար:
13. Իրենց խելք ու միտքը դրամ դիզել է: Օրինակ՝ Բաղասամի նման:
14. Անոնք ցամքած աղբիւրներ են, այսինքն՝ անոնց մէջ կենդանի ջուր չկայ, ինչպէս խոսքացած էր Քրիստոս. «Անոր սիրտն կենսապարտ ջուրի գետեր պիտի բխին: Յիսուս ասիկա կ'ըսէր Սուրբ Հոգիին համար, որ իրեն հաւաքացողները պիտի ընդունէին» (Յովհ 7:38-39):
15. Անոնք հովերէն քշուող մշուշներ են: Չեն անձրեւեր: Առաւել եւս անոնք երկմիտ են: Յարակութիւն չունին:
16. Իմաստէ գուրկ մեծ-մեծ խօսքեր կը խօսին եւ մարմնական անառարկ ցանկութիւններ գրգռելով կը մոլորեցնեն:
17. Ազգապարտիւն կը խոսքանան, մինչ այդ իրենք գերի են կորուստի փանող մոլութեանց:

Այս մարդիկը երազարես մարդիկ են, որովհետեւ ճշմարտութեան ծանօթ չեն, ու չեն ալ ուցեր ճշմարտութեան հետեւիլ, անոր համար ալ երազներով կ'առաջնորդուին, այնպէս մը, որ իրենց կեանքի ընթացքը բնական կը թուի իրենց համար, երբ իրենց մարմինները կը պղծեն, մոռնալ, որ այդ մարմինը կոչուած է փաճառ ըլլալու Սուրբ Հոգիին, այդ մարմինները Քրիստոսի անդամներն են, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ Ա Կորնթ 6:15, 19: Այս ընելով, ուրացած կ'ըլլան, որ միակ Արարիչ ճանչնան Տէրը, որովհետեւ այնպէս մը կը կարծեն, որ այս նիւթեղէն մարմինը Աստուծմէ չէ սրբեղծուած, բայց Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ ամէն ինչ՝ երեւելի եւ աներեւոյթ Աստուած Ինք սրբեղծած է: Այս մարդիկը նաեւ կ'անարգեն հոգեղէն փառաւոր էակները, բան մը որ նոյնիսկ Միքայէլ Հրեշտակապետը, ցանդգնեցաւ անարգական բառերով դարապարտել Սաբանային, այլ՝ Աստուծոյ արդար դարաստանին թողեց, ըսելով. «Տէրը թող քեզ պարժէ»:

Այսպիսիները նաեւ նման են այն անբան անասուններուն, որոնք բանականութիւն չունին, այլ իրենց բնագոյով կ'առաջնորդուին, ինչպէս անասունները, որոնք միայն կ'ուտեն, կը խմեն, իրենց բնագոյի համաձայն կը շարժին, եւ ասիկա պարճառ կ'ըլլայ իրենց իսկ կործանումին:

Յուդա մէկ այլ ուրիշ օրինակներ բերելով ցոյց կու տայ, թէ այս մարդիկը որո՞ւ կը նմանին: Կը նմանին Կայէնին, որ եղբայրսպան եղաւ, իր անհաւաքութեան եւ նախանձի պարճառով: Իրենց պարագային, իրենց ուսուցումներով հոգիներ կը սպանեն: Կը նմանին Բաղասամին, որ դրամի սիրոյն մոլորութեան մէջ իյնկած, մոլորութեան մարմնեց նաեւ Իսրայէլի ժողովուրդը:

Եւ ի վերջոյ, կը նմանին Կորիսին, որ հպարտութեան պատճառով Աստուծոյ դէմ ապստամբեցաւ, ուր Տէրը կորսնցուց գայն (Թուոց 16): Այսպիսները նաեւ «ձեր սիրոյ հաւաքոյթի սեղանները կ'արա-
փաւորեն, կը պղծեն» (12 հմբ): Այս նոյն նիւթով նաեւ Պօղոս Առաքեալ կ'անդրադառնայ
ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՆԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՆ ՄԷՋ (11 գլխ), Տէրունի ընթրիք վերնագրով: Տակաւին, անոնք կը
նմանին «հովերէն քշուող ամպերու, որոնք անձրեւ չեն թափեր, ծառերու, որոնք նոյնիսկ աշնան
պտուղ չեն փար»

ՇԱՐԱԿԱՆ-ՍՂՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիստա Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*